ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 2 փետրվարի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Մ. Թոփուզյանի

Քննության առնելով քաղաքացի Յուրիկ Զախարյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. Քաղաքացի Յուրիկ Զախարյանը 19.01.2011թ. դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի 2-րդ պարբերության սահմանադրականությունը:

2. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է. «Հակասահմանադրական ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի 2-րդ պարբերությունը՝ «Բեկանված քաղաքացիական գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու մասին» ենթակետը»:

3. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի 2-րդ պարբերությունը հակասում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 6-րդ կետի 4-րդ պարբերությանը, քանի որ նշված հոդվածը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխան հոդվածին, իսկ Եվրոպական կոնվենցիան միջազգային պայմանագիր է»:

Դիմողը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ դատարանը բեկանելով առաջին ատյանի դատարանի վճիռը՝ չպետք է գործն ուղարկի նույն՝ օրենքը խախտած դատարան նոր քննության:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ հոդվածներում նշված են իրավասու սուբյեկտների կողմից ՀՀ սահմանադրական դատարանին դիմելու ձևական պահանջները, իսկ նույն օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Դիմողը որևէ հիմնավորում չի ներկայացնում վիճարկվող դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ, նա միայն նշում է, որ դիմումը հակասում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 6-րդ կետի 4-րդ պարբերությանը, քանի որ նշված հոդվածը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխան հոդվածին, չհիմնավորելով, թե վիճարկվող նորմի հակասահմանադրականության արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել:

Բացի դրանից, ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով, իսկ դա նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ վերոնշյալ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հիմնավորում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի և 69-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

Քաղաքացի Յուրիկ Զախարյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

2 փետրվարի 2011 թվականի
ՍԴԴԿՈ/2-1